ՄՈՎՍԵՍ ԽՈՐԵՆԱՑԻՆ ՀԻՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

պրոֆ. Վ. Մ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Մեր մեծ պատմահայր Մովսես Խորենացու հռչակավոր «Հայոց պատմությունը», որ կարևորագույն աղբյուր է ինչպես հայոց, այնպես էլ հարևան ժողովուրդների պատմության համար, պարունակում է նաև առատ տեղեկություններ հնագույն և հին ժամանակներում Հայկական լեռնաշխարհում կառուցված բերդերի ու քաղաքների, տաճարների ու այլևայլ շինությունների մասին։

Ներկա հաղորդման նեղ շրջանակները թույլ չեն տալիս հանգամանորեն քննության առնել Խորենացու հայտնած հարուստ տեղեկությունների ողջ համակարգը, ուստի կանդ կառնենք դրանցից առավել կարևորների վրա, մեջբերումները կատարելով Մովսես Խորենացու Պատմության՝ Ստ. Մալխասյանցի աշխարհարար թարգմանությամբ[1]։

Նախ նշենք, որ թեև ներկայումս ոմանք Խորենացու պատմության առասպելական տարրերը ձգտում են ներկայացնել որպես բացարձակ ճըշմարտացի ու անվիճելի, սակայն, ըստ արժանվույն գնահատելով Խորենացուն, երբի չի խանգարի քննական վերաբերմունք ցուցաբերել նրա հայտնած առանձին տեղեկությունների վերաբերյալ, և ինչպես կտեսնենք, դրա կարիքը կա։ Խորենացին խոստովանում է, որ ինքը օգտագործել է նաև հեթանոսական գրույցներ (այսինքն՝ առասպելներ), բայց դրանցից այն՝ «ինչ որ հավաստի կհամարենք» (էջ 7)։ Մի այլ տեղ (տե՛ս էջ 17), անդրադառնալով իր օգտագործած գրույցներին, պատմահայրը նշում է. «Եվ այս գրույցները սուտ են թե իրոք եղած՝ մեզ համար կարևոր չէ, միայն որպեսզի դու ամեն բան գիտենաս, այս գրքում զետեղում եմ՝ ինչ որ լսովի գիտեմ և ինչ որ գրքերից...»։ Վերը վկայակոչված խոստովանությունները իր Պատմության մեջ պարունակող առասպելական տարրերի մասին, մեր կարծիքով, իրավունք են տալիս նշելու Խորենացու բերած ընդհանուր առմամբ խիստ արժեքավոր գրույցներում երբեմն հանդիպող առարկելի տեղերը։

Հին Հայաստանի քաղաքների մասին Խորենացու հայտնած տեղեկություններից առավել հանդամանալիցը վերաբերում է Ուրարտուի կամ Վանի (այժմ հորջորջվում է նաև Արարատյան) թագավորության մայրաքաղաք Տուշպային, որը գոյատևող քաղաքներից առավել հինն է աշխարհում, ավելի հին, քան «հավերժական» անունը ստացած Հռոմը, քանզի հիմնադրվել է նրանից շուրջ 180 տարի առաջ։

Ստորև քաղվածաբար մեջբերումներ կատարենք Տուշպայի միջնաբերդին վերաբերող Խորենացու խիստ արժեքավոր ու մանրամասն նկարագրություններից, որ նա շարադրել է որպես ականատես (իրավացիորեն այդ կարծիքին է ակադ. Ստ. Մալխասյանցը)։

Միջնաբերդի կառուցումը վերագրելով Շամիրամին, նա հայտնում է. «...Շամիրամը սակավ օրեր մնում է այն դաշտում, որ Արայի անունով կոչվեց Այրարատ. բարձրանում է երկրի հարավակողմն ընկած լեռնային գավառը

---

1 *Մովսես Խորենացի. Հայոց պատմություն. Երևան, 1940 (այսուհետև այս երկից արված մեջբերումների էջերը կտրվեն տողամիջում)։*

(նկատի ունի պատմական Վասպուրականը—Վ. Հ.), որովհետև ամառնային եղանակ էր, կամենալով հովիտներում և ծաղկավետ դաշտերում զբոսնել։ Եվ տեսնելով երկրի գեղեցկությունը, օդի մաքրությունը, բխող մաքուր աղբյուրները, կարկաչահոս և բարեգնաց գետերը՝ նա ասում է. «Պետք է այսպիսի բարեխառն կլիմայում, մաքուր ջրերով երկրում մեզ համար քաղաք և բնակության արքունիք շինել, որպեսզի տարվա շրջանի մի չորրորդ մասը, այսինքն ամառնային եղանակը, ամենատեսակ վայելչությամբ անցկացնենք Հայաստանում, իսկ մյուս երեք մասը, օդի զով ժամանակը, կյանք վայելենք Նինվեում» (էջ 34)։

Շամիրամի բերանով շարադրված այս տեղեկությունը խիստ հետաքրքրական է քաղաքաշինական առումով, քանի որ վերաբերում է քաղաքի համար տեղի ընտրությանը, բնակլիմայական (օդի, ջրի) նպաստավոր պայմանների առկայությանը, ինչը կարևոր մասն է կազմում քաղաքաստեղծ գործոնների համակարգում։ «Շատ տեղերով անցնելով,— շարունակում է Խորենացին,— գալիս հասնում է աղի ծովակի մոտ արևելյան կողմից. տեսնում է ծովի ափին մի երկայնաձև բլուր, որ երկայնությամբ ձգվում էր դեպի արևելք, հյուսիսային կողմում մի փոքր թեքությամբ, իսկ միջօրեական (հարավային)՝ ուղղահայաց դեպի երկինք բարձրացած, զառիվայր ապառաժ։ Սրանից դեպի հարավ հեռուն տարածվում էր մի դաշտաձև երկայնաձև հովիտ (հետագայի Այգեստանները—Վ.Հ.), որ լեռան արևելյան կողմից իջնում էր ծովի ափը, ընդարձակ և գեղեցիկ ձորի ձևով. նրա միջով հոսում էին քաղցրահամ ջրեր լեռներից իջնելով, ծմակներից և հովիտներից ծորալով, որոնք լեռների ստորոտների մոտ միավորվելով՝ ծավալվում, գեղեցիկ գետեր էին կազմում։ Հովտաձև ձորակի մեջ ոչ սակավ շեներ կային, ջրերի աջ ու ձախ կողմերում զետեղված։ Այս հաճելի բլուրից դեպի արևելք կար մի փոքրագույն լեռ» (համապատասխանում է ակռփու քարերին—Վ. Հ.) (էջ 34)։

Խորենացուց մեջ բերված այս գեղեցիկ նկարագրությունը, որ նորից վերաբերում է հիմնադրվող քաղաքի բնակլիմայական պայմաններին, տեղագրական առումով միանգամայն ճշգրիտ է. բացի այդ նա հայտնում է, որ տեղում, գետի երկու ափերին «ոչ սակավ շեներ կային»։

Անդրադառնալով շինարարական աշխատանքների կազմակերպմանը, պատմահայրը հայտնում է, որ Շամիրամը հրամայում է Ասորեստանից ու իր իշխանության տակ գտնվող այլ տեղերից անմիջապես փափագած տեղը բերել չորս բյուր և երկու հազար անարվեստ գործավորներ և վեց հազար ընտրյալ արհեստավորներ, փայտի, քարի, պղնձի և երկաթի գործի վարպետներ։ «Այստեղ,— շարունակում է Պատմահայրը,— հրամայում է բազմությունը շատ դասերի բաժանել և ամեն մի դասի վրա ղեկավար նշանակել վարպետներից ընտիրներին, և այսպես խիստ լարված աշխատանքի մեջ պահելով՝ քիչ տարիներից հետո գլուխ է բերում հրաշալի շինվածքը, ամուր պարիսպներով ու պղնձից շինված դռներով։ Քաղաքի մեջ շինում է նաև բազմաթիվ ընտիր ապարանքներ. կրկնահարկ և եռահարկ, զարդարված տեսակ-տեսակ գույնզգույն քարերով և ամեն մեկում պատուհաններ ըստ հարմարության» (էջ 35)։

Տուշպա քաղաքում 2—3 հարկանի շենքերի առկայության մասին Խորենացու այս տեղեկությունը ճշտվեց Տուշպայի երկրորդ միջնաբերդ Թոփրակկալեում, անցած դարի վերջում գտնված 16,5×30,5 սմ չափերի բրոնզե մի թերթիկով (այժմ գտնվում է Բրիտանական թանգարանում), որի վրա գծված է եռահարկ շենքի ճակատ՝ պսակված գոտիով ու ատամնաշարով։ Ճակատի այդ գծագիրը զարմանալի կերպով համապատասխանում է Թելլեբաինիի (Կարմիր բլուրի) քաղաքատարածության վրա պեղումներով բացված բազմասենյակոտ բնակելի տան հատակագծին։

Նկարագրության շարունակությունը վերաբերում է քաղաքի բարեկարգմանը։ «Քաղաքի կողմերն էլ,— հայտնում է Պատմահայրը,— որոշում է

դեղեցկագույն և ընդարձակ փողոցներով։ Շինում է նաև չքնաղ և զարմանալու արժանի բաղանիքներ, համապատասխան քաղաքի դիրքին և պիտույքներին։ Դեռի մի մասը (առուների) բաժանելով՝ անց է կացնում քաղաքի միջով ամեն տեսակի պիտույքների, բուրաստանների ու ծաղկոցների ոռոգման համար. իսկ մյուս մասը (անց է կացնում) ծովակի աջ և ձախ ափերով՝ քաղաքի ե բոլոր շրջակայքի ոռոգման համար (այս մասը վերաբերում է Շամիրամի ջրանցքին, որ ներկայումս էլ շարունակում է գործել— Վ. Հ.)։ Քաղաքի բոլոր արևելյան, հյուսիսային և հարավային կողմերը զարդարում է դաստակերտներով, վարսագեղ սաղարթախիտ ծառերով՝ զանազանակերպ պտուղներով ու տերևներով, և այնտեղ տնկում է բազմաթիվ առատարեր ե դիներեր այգիներ։ Պարսպած քաղաքն ամեն կերպ հոյակապ ու հռչակավոր է դարձնում և մեջը բնակեցնում է մարդկանց անթիվ բազմություն» (էջ 35—36)։

Դոյատեելով մ. թ. ա. IX դարից մինչև մ. թ. XX դարի սկիզբը (1915 թ. ապրիլ—մայիս ամիսներին տեղի ունեցած վանեցիների հերոսական ինքնապաշտպանությունը), Տուշպա—Վանտոսպ—Վանը հիմնականում պահպանել էր Խորենացու նկարագրած հատակագծային կառուցվածքը՝ բաղկացած հյուսիսակողմի քարաժայռի վրա տեղավորված միջնաբերդից, դրա հարավակողմյան հարթավայրի վրա սփռված ու պարիսպներով շրջապատված բուն քաղաքից (որ վանեցիները քաղաքամեջ էին կոչում) ու շրջապատի արվարձաններից (Վանի այգեստաններից)։

Ոչ պակաս հետաքրքրական է միջնաբերդին վերաբերող Խորենացու նկարագրությունը։ «Իսկ քաղաքի (վերի) ծայրը և այնտեղի հրաշալի շինվածքները մարդկանց ջատերին անհասկանալի են մնում և պատմելու հնարավորություն չկա։ Այստեղ դագաթի շուրջը պարիսպ քաշելով՝ ներսը դնում է դժվար մտնելու և դժվար դուրս գալու ինչ-որ ծածուկ և ահռելի արքայանիստ շինվածքներ։ Դրանց շինության որոյիսությունը մենք ոչ ոքից ճշտությամբ չենք լսել, ուստի հարմար չենք դատում մեր պատմության մեջ հյուսել. այսքան կասենք, թե, ինչպես լսել ենք, սրանք բոլոր թագավորական գործերի մեջ առաջին ե վեհագույն են համարվում։

Իսկ քարաժայռի դեպի արեգակը դարձած կողմը, որտեղ այժմ և ոչ մի դիծ կարող է մարդ գծել երկաթով, այսպիսի կարծր քարի մեջ զանազան սենյակներ, ննջարաններ, գանձարաններ և երկար վիհեր՝ հայտնի չէ ինչ բանի համար, հրաշակերտեց» (էջ 36)։

Միանգամայն իրավացի է Պատմահայրը. Տուշպայի միջնաբերդի Ծայռաղանդվածում տեղավորված բազմասենյակ ժայռափոր խմբերը (որպիսիք են Խորխորի Մեծ և Փոքր, Իշկալա, Նավթկուլու և այլ խմբեր) ստեղծված աշխատատար և տևական մեծ ջանքերով ու ժայռակոփության բարձր վարպետությամբ, հիրավի շինարվեստի սխրանք, ժայռափոր ճարտարապետության գլուխգործոցներ կարելի է համարել։

Խորենացու ուշադրությունից չեն վրիպել ժայռերին փորագրված սեպագիր արձանագրությունները։ «Իսկ քարաժայռի բոլոր երեսները հարթելով,— շարունակում է նա իր նկարագրությունը,— ինչպես գրչով հարթում են մեղրամոմը, վրան շատ դրեր գրել տվեց, որոնց տեսքը միայն բոլորին զարմացնում է» (էջ 36)։

Արդարացի կլինի հարցում անել նրանց, ովքեր այժմ պնդում են, թե ուրարտական թագավորությունը Այրարատյան թագավորությունն էր, իսկ ուրարտացիները հայեր էին, հապա ինչպե՞ս մեզանից 1500 տարի առաջ ապրած Խորենացին այդ սեպագրերի լեզվին անծանոթ էր, անտեղյակ էր սեպագրերի բովանդակությանը։ Այլապես նա Շամիրամ թագուհուն չէր վերագրի Տուշպայի շինարարության աշխատանքները, որոնք իրականում կատարված են ուրարտական թագավորների կողմից, ինչի մասին հավաստի հիշատակություններ կան այդ սեպագրերում։ Ահա թե ինչու, արժանին մատուցելով Պատմահորը, այս ընդարձակ ու հետաքրքրական մեջբերումը կատա-

բելով նրա Պատմությունից (քանզի քաղաքի շինարարության վերաբերյալ այսպիսի հանգամանալից նկարագրության չենք հանդիպի ոչ մեկ հայ պատմիչի մոտ), այնուամենայնիվ նշենք, որ Խորենացու Պատմության մեջ էլ կարող են առարկելի տեղեր լինել։

Թեև առավել սեղմ են Խորենացու հայտնած տեղեկությունները անտիկ Հայաստանի քաղաքների մասին, այնուամենայնիվ քաղաքաշինական առումով դրանք որոշակի հետաքրքրություն են ներկայացնում։ Անդրադառնանք դրանց։

Արարատյան դաշտում Երվանդունի թագավորների հիմնադրած մայրաքաղաքներից Խորենացու առաջին հիշատակությունը վերաբերում է Արմավիրին։ Հենվելով Մար Աբասի մատյանի վրա ու քաղաքի հիմնադրումը վերագրելով Արամանյակի որդուն՝ Արամայիսին, նա հայտնում է. «...Արամայիսը իր բնակության համար տոմն է շինում դետի ափին մի բլուրի վրա և իր անունով կոչում է Արմավիր, իսկ գետը կոչում Երասխ՝ իր թոռան Երասխի անունով» (էջ 26)։ Ինչպես ցույց տվին վերջին տարիներին Նոր Արմավիր գյուղի մոտակայքում գտնվող բլուրի պեղումները, կատարված հնագետ Հարություն Մարտիրոսյանի ղեկավարությամբ, Արամայիսն իր տունը, այսինքն ապարանքը, կառուցել է ոչ թե ազատ տեղում, այլ այստեղ գտնըվող ուրարտական Արգիշտիխինիլի քաղաքի արևելյան միջնաբերդի վրա, այն վերակառուցելով ու պաշտպանական նոր կառուցվածքներով ամրացնելով։ Արմավիրին վերաբերող Խորենացու այլ հաղորդումներից իմանում ենք, որ այն ոչ միայն եղել է Երվանդունիների վարչական, այլև պաշտամունքային (գուշակությունների) կենտրոն։ Արմավիրում գոյություն ունեցող հեթանոսական տաճարներին Պատմահայրը անդրադառնում է մի քանի անգամ։ «Արմավիրում մեհյան շինելով,— հայտնում է նա,— արձաններ է կանգնեցնում արեգակին, լուսնին և իր նախնիքներին» (էջ 75)։

Պատմելով Արտաշես առաջինի հաղթարշավների մասին նա հայտնում է, թե Արտաշեսը «Ասիայում գտնելով Արտեմիդի, Հերակլի և Ապոլոնի պղնձաձույլ ոսկեզօծ արձանները, բերել է տալիս մեր աշխարհը, որպեսզի կանգնեցնեն Արմավիրում։ Քրմապետները, որոնք Վահունիների ցեղից էին, Ապոլոնի և Արտամիդի արձաններն առնելով կանգնեցրին Արմավիրում, իսկ Հերակլեսի արձանը, որ Սկյուղեսի և կրետացի Դիպինոսի գործն էր, իրենց նախնի Վահագնը համարելով, կանգնեցրին Տարոնում, իրենց սեփական Աշտիշատ գյուղում՝ Արտաշեսի մահից հետո» (էջ 79)։ Արմավիրում հեթանոսական տաճարների, նրանցում անտիկ հունական բազիլների, ինչպես նաև տեղում ժայռաբեկորների վրա փորագրված հունարեն արձանագրությունների հետազոտողները (Ա. Բոլտունովա, Հ. Մանանդյան, Կ. Տրեվեր և այլք), նախապես Արմավիրի (նաև անտիկ Հայաստանի մյուս քաղաքների) քաղաքաշինական մշակույթը դիտել են հունա-հելլենիստական մշակույթի ոլորտում։ Այդ տեսակետը միանգամայն ճշտվեց հնագետներ Բաբկեն Առաքելյանի և Գևորգ Տիրացյանի ղեկավարությամբ Արմավիրի միջնաբերդում կատարված պեղումների, այդ թվում շինարվեստի և ճարտարապետության նյութերի հիման վրա։

Արմավիրի կյանքը տևական չի եղել։ Ինչպես հայտնում է Խորենացին, դեռևս Երվանդունիների օրոք ստիպված են եղել Արմավիրից ոչ հեռու մի այլ վայրում, Երասխի ձախ ափին մի նոր քաղաք հիմնադրել Երվանդաշատ անունով։ «Սրա (այսինքն՝ Երվանդի—Վ. Հ.) ժամանակ,—պատմում է Խորենացին,— արքունիքը Արմավիր կոչված բլրից փոխադրվում է, որովհետև Երասխ գետը (նրանից) հեռացել էր, և ձմեռն երկարելիս երբ հյուսիսային ցուրտ քամիներ էին փչում, վտակը սառչում էր բոլորովին, և թագավորական կայանի համար խմելու բավական ջուր չէր ճարվում։ Սրանից Երվանդը նեղվելով, մանավանդ մի ավելի ամուր տեղ փնտրելով՝ արքունիքը տեղափոխում է դեպի արևմտյան կողմը, միակտուր ապառաժ բլուրի վրա, որի շուրջ պատում է Երասխը, իսկ դիմացից էլ հոսում է Ախուրյան գետը» (էջ

109)։ Պատմահոր նկարագրած տեղագրությունը իրոք միանգամայն համապատասխանում է տեղանքին, ուր շատ տարիներ առաջ առիթ ենք ունեցել լինելու և ծանոթանալու քաղաքի մնացորդներին։ Սա՝ մանի վրա գտնվելն է պատճառը, որ մինչև այժմ քաղաքատեղը հնագիտական հետազոտման չի ենթարկվել։

Անդրադառնալով Երվանդաշատի միջնաբերդի դիրքին և պաշտպանական կառուցվածքներին, որոնցով նա առավել ամուր էր, քան Արմավիրը, Խորենացին պատմում է. «(Երվանդը) բլուրը պարսպում է, իսկ պարսպից ներս շատ տեղերում քարերը կտրել տալով իջեցնում է մինչև բլուրի հատակը, դեպի (մակերևույթին) հավասար, այնպես որ դեպից ջրերը հոսեն այդ փորված տեղը, խմելու ջուր մատակարարելով։ Միջնաբերդն ամրացնում է բարձր պարիսպներով, պարիսպների մեջ պղնձե դռներ է դնում և երկաթե սանդուղքներ ներքևից մինչև վեր, մինչև դուռը, սանդուղքի վրա, աստիճանների միջև, թաքնված որոգայթներ է շինում, որպեսզի եթե մեկը կամենա գաղտնի բարձրանալ թագավորին դավելու նպատակով, բռնվի։ Սանդուղքը, ասում են, երկու տեսակ էր սարքված, մեկը ցերեկվան ճանապարհ արքունի սպասավորների և ընդհանրապես նլևմուտի համար, իսկ մյուսը գիշերային, դավադիրների դեմ» (էջ 109—110)։

Երվանդաշատից ոչ հեռու, նույն Երվանդը հիմնադրում է Երվանդակերտ կոչված ձեռակերտը։ «Ինձ քաղցր է պատմել,— հայտնում է Խորենացին,— նաև գեղեցիկ Երվանդակերտ դաստակերտի մասին, որ նույն Երվանդը շինեց գեղեցիկ և չքնաղ հորինվածքով։ Որովհետև մեծ հովիտի միջին մասը լցնում է բնակչությամբ և պայծառ շինություններով, լուսավոր, ինչպես աչքի բիբը, իսկ բնակչության շուրջը կազմում է ծաղկոցներ և բուրաստաններ, ինչպես բբի շուրջը աչքի մյուս բոլորակը» (էջ 110—111)։ Դաստակերտի նկարագրության մյուս մասերում էլ Պատմահայրը ձգտում է ճարտարապետական ձեր, քաղաքի մասերը մարդակերպությամբ մեկնաբանել՝ մարդու մարմնի մասերի հետ համեմատելու միջոցով։

Թորոս Թորամանյանը, որ մեզանից առաջ հետազոտական ուղևորություն է կատարել այդ կողմերում, գտնում է, որ «պարզապես մեր այսօրվան Երվանդակերտ կարծածն է Պն Երվանդաշատը, իսկ Երվանդակերտը պետք է ինարել Արաքսի մյուս ափին վրա։ Խորենացիի մոտ եղած շփոթությունը դուցե միայն երկու գետերուն անուններուն մեջ եղած է և փոխանակ Արաքսի երկու եղերքին վրա սույն երկու քաղաքները ցույց տալու, Ախուրյանի երկու կողմերուն վրա ցույց տված է»[2]։ Քննական վերաբերմունք ցուցաբերելով Պատմահոր հայտնած տեղեկության և բանասեր Կ. Կոստանյանցի այդ առթիվ արված մեկնաբանության նկատմամբ, Թորամանյանը գտնում է, որ «անհրաժեշտ է նաև մասնագիտական մի արշավախումբ կազմել մոտիկ ապագայի մեջ, որպեսզի տեղին վրա քննվի մինչև այսօր պատմությունն ու ավանդությունները հետաշրջելու սպառնացող փափուկ և միանգամայն կարևոր խնդիրը»[3]։ Սակայն մեր ժամանակներում հնարավոր չեղավ իրականացնել Թորամանյանի այդ խորհուրդը, քանզի Երվանդակերտի մնացորդները գտնվում են մեր սահմաններից դուրս, Թուրքիային անցած տարածքում։

Խորենացին նույն Երվանդին է վերագրում Բագարան քաղաքի հիմնադրումը։ «Բայց Երվանդն իր քաղաքը շինելով՝ Արմավիրից այնտեղ փոխադրեց ամեն ինչ բացի կուռքերից, որովհետև իրեն համար օգտակար չհամարեց նրանց էլ իր քաղաքը փոխադրել, որ մի գուցե երբ ժողովուրդը զոհաբերության համար այնտեղ դա, քաղաքն զգուշությամբ չպահվի։ Ուստի նրանից հյուսիս, մոտ քառասուն ասպարեզ հեռու, Ախուրյան գետի վրա, շինեց մի փոքր քաղաք նման իր քաղաքին և կոչեց Բագարան, այսինքն թե

---

2 Թ. Թորամանյան. Նյութեր հայկական ճարտարապետության պատմության. Ա, Երևան, 1942, էջ 286։

3 Նույն տեղում։

բագիններն այնտեղ են սարքավորված, և այնտեղ փոխադրեց Արմավիրում հաղած բոլոր կուռքերը։ Շինեց նաև մեհյաններ և իր Երվաղ եղբորը քրմապետ նշանակեց» (էջ 110)։ Հարկ է նշել, որ Բագարանի մասին Խորենացու հայտնած տեղագրությունը միանգամայն համապատասխանում է իրականությանը։ Նրա ավերակները, վաղ միջնադարում կառուցված Ս. Հովհաննես տաճարի հետ միասին, գտնվում են Երվանդաշատից ոչ հեռու, Ախուրյան գետի աջափնյա տարածքում (այդ պատճառով էլ մեր ժամանակներում ուսումնասիրման համար անմատչելի եղան)։

Քաղաքաշինական առումով ավելի արժեքավոր է Խորենացու հայտնած տեղեկությունը Արտաշես առաջինի (մ. թ. ա. 189—161 թթ.) կողմից Արտաշատ քաղաքի հիմնադրման մասին։ «Արտաշեսը գնում է այն տեղը,— պատմում է նա,— որտեղ Երասխը և Մեծամորը խառնվում են, և այնտեղ բլուրին հավանելով, քաղաք է շինում և իր անունով կոչում է Արտաշատ։ Երասխն էլ օգնում է նրան անտառի փայտով։ Ուստի առանց դժվարության և արագ շինելով՝ այնտեղ մեհյան է կանգնեցնում և Բագարանից այնտեղ է բերում Արտեմիսի արձանը և բոլոր հայրենական կուռքերը։ Բայց Ապոլոնի արձանը կանգնեցնում է քաղաքից դուրս, ճանապարհին մոտ։ Երվանդի քաղաքից դուրս է բերում հրեա գերիներին, որ այնտեղ տարված էին Արմավիրից, և բերում նստեցնում է Արտաշատում։ Նաև Երվանդի քաղաքի բոլոր վայելչությունները, ինչ որ նա փոխագրել էր Արմավիրից, և ինչ որ հենց ինքն էր շինել՝ բերում է Արտաշատ, և ավելի շատ բան էլ իր կողմից շինելով (այդ քաղաքը) սարքավորում է իբրև արքայանիստ քաղաք (էջ 117)։ Խորենացու «Երասխն էլ օգնում է նրան անտառի փայտով» վկայությունից պետք է եզրակացնել, որ այդ գետի միջոցով էր դրա վերին հոսանքին մոտակա անտառաշատ վայրերից (հավանաբար այժմ Թուրքիայի տարածքում գտնվող Սարիղամիշից), փայտանյութ մատակարարվում քաղաքի շինարարության կարիքների համար։

Արտաշատի տեղագրության մասին Խորենացու հայտնածի մեջ որոշ տարակուսանք է առաջացնում այն, որ ըստ նրա՝ Արտաշատի հիմնադրման տեղում Երասխին միախառնվում էր Մեծամոր գետը։ Դա կնշանակի, որ Մեծամոր գետն իր ակունքից (այժմյան Այղր լճից) սկսած, Արարատյան դաշտով տասնյակ կիլոմետրերով Երասխին զուգահեռ հոսել է, ապա հիշատակված տեղում է միախառնվել Երասխին, որին դժվար է հավատալ։ Թվում է, թե Պատմահայրը Ազատ գետի փոխարեն (որը իրոք մոտավորապես այդ կողմերում է թափվում Երասխ), հիշատակել է Մեծամորի անունը։

Թեև Արտաշատի տեղադրության ու նկարագրության հարցում Պատմահորը ինչ-որ չափով լրացնում են հայ պատմիչ Ագաթանգեղոսը, հույն ճանապարհորդ Ստրաբոնը, հռոմեացի պատմիչներ Պլուտարքոսը և Տակիտոսը, սակայն երկար ժամանակ Արտաշատի տեղի հարցում գոյություն ուներ շփոթություն։ Օտարերկրյա ճանապարհորդներից Ջեմս Մորիերը, Ջոնսոնը, Կեր-Պորտերը, Դյուբուա դը Մոնպերեն և ուրիշները, իրենց ճանապարհորդական նոթերում Դվինի ավերակները սխալմամբ ներկայացրել են որպես Արտաշատի։ Դրա պատճառն այն է, որ Դվինի ավերակների մոտ, հարավարևելյան կողմից գտնվում է Արտաշատ մայրաքաղաքի անունը որդեգրած Վերին Արտաշատ գյուղը։ Ինչպես հետագա ուսումնասիրությունները ցույց տվեցին, անվան որդեգրման պատճառն այն է, որ այդ բնակավայրը առաջացել է Դվինի Արտաշատյան անունը կրող դարպասից դուրս, որտեղից գտնվորվում էր դեպի Արտաշատ տանող մայրուղին։

Բուն Արտաշատ մայրաքաղաքի տեղորոշման համար պարտական ենք գետ Հովսեփ Եղիազարյանին (որի անունը ցավոք մոռացության է տրվել)։ Տեսական ու բծախնդիր տեղագննություններից հետո նա եկել է այն եզրակացության, որ Արտաշատի ավերակների մնացորդները պետք է որոնել Խոր Վիրապի վանքի շրջակայքում և այն բլուրը, որի վրա գտնվում է նշված վանքը, եղել է Արտաշեսի հիմնած մայրաքաղաքի միջնաբերդը։

Ակադեմիկոս Բ. Առաքելյանի ղեկավարությամբ նշված հնավայրում սկսված պեղումները լիովին արդարացրին վերոհիշյալ վարկածը։ Պեղումներով հայտնաբերված նյութական մշակույթը միանգամայն լրացնում է Արտաշատի՝ որպես հայկական հելլենիզմի կարևորագույն կենտրոնի մասին թեկուզ ժլատ տեղեկությունները։ Արտաշատի հելլենիստական բնույթն են վկայում թատրոնի (հավանաբար անտիկ հունականի նմանությամբ) — յությունն այստեղ (որում մ. թ. ա. 53 թ. բեմադրվել են Էվրիպիդեսի «Բ քոսուհիները», հավանաբար նաև Տիգրան II-ի որդի Արտավազդի հունա լեզվով գրված դրամատիկական երկերը), հեթանոսական տաճարների, — , բանցում բարձրարվեստ կուռքերի առկայությունը (պեղումներով հայտնաբերված է «Արտաշատյան Ափրոդիտե» կոչված մարմարակերտ արձանը)։ Լիահույս ենք, որ ապագա պեղումներն է՛լ ավելի կհարստացնեն եղած պատմական ու հնագիտական նյութերը Արտաշատի՝ որպես հելլենիստական մշակույթի (այդ թվում քաղաքաշինության և ճարտարապետության) օրրաններից դլխավորի մասին Արարատյան դաշտում։

Արտաշատը գոյատևել է շուրջ 500 տարի ու լքվել մ. թ. ա. III—IV դդ.։ Դրա պատճառի մասին նորից տեղեկանում ենք Խորենացուց՝ Խոսրով Կոտակ թագավորի կողմից մայրաքաղաքը Արտաշատից Դվին փոխադրելու կապակցությամբ։ «Որովհետև,— հայտնում է Պատմահայրը,— այդ ժամանակ Հրատն ուղեկցում էր Արեգակին և անմաքուր ջերմ օդը դարշելի հոտ էր բուրում, ուստի Արտաշատում բնակվողներն այս բանին չդիմանալով՝ կամով հանձն առան այս տեղափոխությունը» (էջ 179)։

Արտաշատի բնակլիմայական պայմանների վատթարացումը նորից բացատրվում է Երասխի հունի հեռացմամբ քաղաքից, որի հետևանքով քաղաքը շուրջը առաջանում են ճահիճներով պատած տարածություններ (որոնք հիմա էլ գոյություն ունեն հնավայրում)։ Այսպիսով, Արմավիրից հետո, Խորենացու հիշատակությամբ սա քաղաքի լքման երկրորդ դեպքն է, որը առնչ է ունենում Երասխի հունի փոփոխման պատճառով։

Պատմահայրն իր մատյանի առաջին գրքի ԻԴ հատվածում պատմում է հայ ժողովրդի պատմության մեջ լայնորեն հայտնի Տիգրան II-ի (մ. թ. ա. 95—55 թթ.) մասին, որն իր խոսքերով արտահայտած՝ «մեր թագավորներից ամենահզորն և ամենախոհեմն էր և նրանցից բոլորից քաջ» (էջ 45)։ Պատմում է նրա գործերի, անձնական արժանիքների, նույնիսկ մարմնական բարեմասնությունների մասին, սակայն անհասկանալի ժլատ է գտնվել Տիգրանի շինարարական գործունեության, հատկապես Հայաստանի նոր մայրաքաղաք Տիգրանակերտի հիմնադրման ու կառուցապատման մասին, ինչի վերաբերյալ տեղեկություն ենք քաղում այլ աղբյուրներից։ Շատ ափսոս, որովհետև բոլոր տվյալներով Տիգրան II-ի ժամանակ հայկական հելլենիստական մշակույթը (այդ թվում նաև քաղաքաշինական) ապրեց իր զարգացման բարձրակետը, քանզի ըստ այլ աղբյուրների, նա այդ մշակույթի ջերմեռանդ երկրպագուն էր։

Տիգրանակերտի մասին Պատմահայրը հիշատակում է երկու անառարկելի՝ պարսից արքա Շապուհի զորքերի կողմից ապարդյուն պաշարումը, երկրորդը՝ գրավման կապակցությամբ։ Հպանցիկ հիշատակելով քաղաքի պարիսպների հզորությունը (այլ աղբյուրներից գիտենք, որ դրանք 50 մետր՝ շուրջ 26 մ բարձրություն ունեին և այնքան լայն էին, որ նրանց վրա տեղավորվում էին այրուձիի փարախները և շտեմարանները)։ Խորենացին նկարագրում է, որ գերի հույների օգնությամբ դրանք խորտակվեցին պարսպահար մեքենայով, ինչը տեղի է ունեցել IV դարի 70-ական թթ.։ «Իսկ հույները մոտ գալով, մեծ ուժով պարսպին դեմ դրին էշ կոչված (գործիքը)։ Սա մի անվավոր մեքենա է, որ քշելով տաքում են երեք մարդ. նրանց ներքևում կան կացիններ, երկաթյա սակրներ և սրածայր մուրճեր՝ հիմքերը փորելու համար, և այն պատերը, որ Հայկազնյան Տիգրանը շինել էր հաստ և ամուր, հիմքից քանդելով, տապալեցին...» (էջ 197)։

Այս հաղորդման մեջ անշուշտ առավել հետաքրքրություն է ներկայացնում պարսպահար մեքենայի կառուցվածքի և գործադրության նկարագրությունը։

Տիգրանակերտի տեղադրությունը երկար ժամանակ անհայտ է եղել. այդ տեղը, նույնիսկ մինչև հիմա, ոմանց կողմից սխալմամբ վերագրվում է Դիարբեքիրին։ Գերմանացի Ֆելդմարշալ ֆոն Մոլտկեն անցած դարի երեսնական թվականներին Թուրքիայում կատարած իր ուղեկրությունում Ֆարկին գյուղի մոտ գտնվող ավերակները վերագրել է Տիգրանակերտին։ Այդ կարծիքը ճշտվեց հետագա տեղանքնումների տվյալներով։

Պատմությունից հայտնի է, որ Տիգրանակերտի մնացորդների վրա է կառուցապատվել Արևմտյան Հայաստանի վաղ միջնադարյան քաղաքներից մեկը՝ Նփրկերտը (բյուզանդական անվանմամբ՝ Մարտիրոպոլիսը)։ Թեև այդ քաղաքատեղիի մասին գիտական գրականության մեջ կարելի է հանդիպել հիշատակություն, նույնիսկ նկարագրություն և տեղագրական հատակագիծ, սակայն որքան մեզ հայտնի է, ցտրդ այն հնագիտական հատուկ հետազոտման չի ենթարկվել։

Տիգրանակերտին բազմիցս անդրադարձել են օտար գիտնականներն ու ակադեմիկոս Հակոբ Մանանդյանն իր «Տիգրան Բ և Հռոմը» մենագրությունում[4], իսկ ակադեմիկոս Գագիկ Սարգսյանը հեղինակն է «Տիգրանակերտ» շահեկան աշխատության[5], որում հանգամանորեն քննված են քաղաքի պատմության և սոցիալ-տնտեսական կառուցվածքի հարցերը։

Թեև խիստ ամփոփ, սակայն չափազանց արժեքավոր է Խորենացու կողմից Գառնիի տաճարի կառուցման նկարագրությունը։ «Այն ժամանակները,— հայտնում է Պատմահայրը,— Տրդատն ավարտում է Գառնիի ամրոցի շինությունը տաշած որձաքար քարերով, որոնք ագուցված էին երկաթե գամերով ու կապերով. նրա մեջ շինում է հովանոց՝ արձաններով, սքանչելի դրվագներով և բարձրաքանդակներով, իր Խոսրովիդուխտ քրոջ համար, և նրա վրա գրում է իր հիշատակը հունարեն գրերով (էջ 163)։

Այս հակիրճ շարադրանքում առանձնապես ուշադրության արժանի է գործադրված շինարվեստի հիշատակությունը՝ տաշած քարերով, որոնք միմյանց ագուցված էին երկաթե գամերով և կապերով (գրաբարով դա հնչում է ավելի ճշգրիտ՝ «որձաքար և կոփածոյ վիմօք, երկաթագամ և կապարով մածուցեալ»)։ Իրոք, Գառնիի ամրոցի ինչպես պարիսպները, այնպես էլ տաճարը կառուցված են անշաղախ, անտիկ-հունական կոչվող շինելակերպով (նույնը կիրառվեց տաճարի ամբողջական վերականգնման ժամանակ)։

Ուշադրության արժանի մյուս տեղեկությունը վերաբերում է Տրդատի թողած հիշատակի արձանագրությանը՝ հունարեն գրերով։ Քանի դեռ այն չէր հայտնաբերվել, ոմանք կասկածով էին վերաբերվում Խորենացու այդ տեղեկությանը։ Բայց այդ կասկածը մեր ժամանակներում իսպառ փարատվեց։ Տարիներ առաջ, երբ Հայաստանի հնությունների պահպանության կոմիտեի նախագահի տեղակալ էի, Մարտիրոս Սարյանի ստորագրությամբ Գառնիից հեռագիր ստացա, որում հայտնում էր, թե գյուղի գերեզմանատանը կոփածո մի քար է հայտնաբերել, մի երեսին (որը շրջված է եղել) ինչ-որ արձանագրությամբ։ Իսկույն մի հանձնախումբ մեկնեց Գառնի և գերեզմանատանը մենք ականատես եղանք մի շատ կարևոր հայտնագործության։ Վերջապես գտնվեց Խորենացու հիշատակած հունարեն արձանագրությունը։

Բնականաբար, գիտական աշխարհում այն մեծ հետաքրքրություն առաջացրեց. դրա թարգմանությամբ ու մեկնաբանությամբ զբաղվեցին Հակոբ Մանանդյանը, Ստեփան Լիսիցյանը, Կամիլլա Տրեվերը, Բաբկեն Առաքելյանը, ավելի ուշ՝ նաև Հրաչ Բարթիկյանը։

Ակադեմիկոս Հակոբ Մանանդյանը, ձեռնարկելով արձանագրության

---

4 Երևան, 1943։

5 Մոսկվա, 1960։

թարգմանությունը, դրան նվիրված իր աշխատության առաջաբանում գրել է. «Այս կարևոր գյուտից հետո, Գառնի մեկնած Հայկական ՍՍՀ Պատմական հուշարձանների պահպանության կոմիտեի հատուկ հանձնաժողովը ականատես է եղել հետևյալ հետաքրքիր փաստերի։ «Տարիների ընթացքում, հաղորդում է կոմիտեի նախագահի տեղակալ Վ. Հարությունյանը, Գառնիի բնակիչները ամրոցից գերեզմանատուն են տեղափոխել մեծ քանակությամբ բազալտե տաշված քարեր, որպես գերեզմանաքարեր։ Այդ քարերի մեծ մասը պատկանում են ամրոցի պարսպին։ Կան մի քանի քանդակազարդ քարեր, որոնք պատկանում են տաճարին։ Այդպիսի քարեր կան նաև գյուղի մի շարք շենքերի պատերին» (տե՛ս «Սովետական Հայաստան», 31 օգոստոսի 1945 թ.)»[6]։ (Փակագծում նշենք, որ տաճարի վերականգնման ընթացքում այդ բոլոր քարերը փոխադրվեցին ամրոց և օգտագործվեցին ըստ պատկանելության)։

Ստորև բերում ենք արձանագրության բովանդակությունը ակադեմիկոս Հակոբ Մանանդյանի թարգմանությամբ. «Էլիոս Տիրիգատես թագավորը Մեծ Հայաստանի, իշխելով որպես գերագույն Տեր՝ վերստին կառուցեց տաճարը, անհաղթելին, իր քրոջ՝ արքայադստեր համար մեծաշուք թագուհու խնդիրքով։ Շենքի հովանու ներքո սպասավորողը թող երգեր խորհեն մեծ սրբին, նաև գոհության ավետարանման համար»[7]։

Պրոֆ. Ստ. Լիսիցյանի թարգմանությամբ արձանագրությունն սկսվում է հետևյալ բառերով. «Արև Տիրիգատես Մեծ Արմենիայի անարժան Պետ կառուցեց տուն (տաճար) թագուհու համար...» և այլն։

Վերը հիշատակված երկու և մյուս թարգմանություններում ընդհանուրը Տրդատի անվան և տաճարի կառուցման հիշատակությունն է, տարբերությունը շարունակության մեջ է։ Ակադեմիկոս Գագիկ Սարգսյանն իր «Հելլենիզմի դարաշրջանի Հայաստանը և Մովսես Խորենացին» գրքում[8] հանգամանորեն բաղդատել է Գառնիի հունարեն արձանագրության թարգմանությունները և կատարել արժեքավոր մեկնաբանություններ։

Ինչպես տեսանք, Տրդատը հիշատակված է որպես Մեծ Հայքի թագավոր և տաճարը կառուցել տվող։ Սակայն ո՞ր Տրդատին վերագրել ճարտարապետական այդ իրոք մեծագործությունը։ Ահա այս հարցում է, որ հայ ճարտարապետության պատմաբանները անհամաձայն են Խորենացու հետ։ Հետևելով Խորենացուն, Թորոս Թորամանյանը սկզբում տաճարի կառուցումը վերագրել է Տրդատ Մեծին (298—330 թթ.), սակայն հետագայում փոխելով իր կարծիքը, այդ պատիվը վերագրել է Տրդատ I-ին, համարելով, որ կառուցումը կատարվել է Հռոմից բերված ճարտարապետների միջոցով[9]։

Նույն կարծիքն է հայտնել Երևանի պոլիտեխնիկական ինստիտուտում ճարտարապետական կրթության հիմնադիր և ամբիոնի առաջին վարիչ, պրոֆեսոր Նիկողայոս Բունիաթյանը, որը հեղինակն է տաճարի հանգամանալից ուսումնասիրության և վերակազմության նախագծի։ «Հուշարձանի էլ ավելի ուշադիր քննումը,— գրում է նա,— մեզ բերում է այն եզրակացության, որ տաճարի ընդհանուր կառուցվածքը և մանրամասնությունների մշակումը բավականաչափ ճիշտ կերպով որոշում են հուշարձանի ժամանակը ոչ ուշ քան առաջին դարը մեր թվ.»[10]։

Այս կարծիքը ընդհանրական է դարձել հայ ճարտարապետության պատմության մասնագետների շրջանում, նախ և առաջ «Գառնիի անտիկ կա-

---

6 Հակոբ Մանանդյան. Գառնիի հունարեն արձանագրությունը և Գառնիի տաճարի կառուցման ժամանակը. Երևան, 1946, էջ 3։

7 Նույն տեղում, էջ 8։

8 Երևան, 1966։

9 Թ. Թորամանյան. նշվ. աշխ., էջ 167, 174։

10 Ն. Բունիաթյան. Հեթանոսական տաճար Տրդատի պալատին կից Գառնիի ամրոցում. Երևան, 1933, էջ 5։

ուցվածքների ճարտարապետությունը»[11] հիմնարար մենագրության հեղինակ և տաճարի վերականգնման գիտական ղեկավար Ալեքսանդր Սահինյանի մոտ։ Անտիկ Հայաստանի մշակույթի բաղմահմուտ հետազոտող Կամիլլա Տրեվերը, կատարելով ճաշակն համադրություն Փոքր Ասիայի I դարի երկրորդ կեսի նույնատիպ հուշարձանների հետ, վստահորեն եզրակացնում է. «Գառնիի տաճարը կառուցվել է Տրդատ I-ի կողմից առաջին դարի 70-ական թվականներին և նվիրված է եղել Արևի աստծու պաշտամունքին»[12]։

Հօգուտ այդ կարծիքի ծառայում է պատմական մի կարևոր իրադարձություն։ Ինչպես հայտնի է, հռոմեական անփառունակ կայսր Ներոնից թագակալելու համար Տրդատ I-ը մ. թ. 65 թ. Հռոմ է մեկնել, որի փորձառությամբ կատարվել է այդ արարողության հանդիսությունը։ 66 թ. Հռոմից նվերներով վերադառնալով, նա ձեռնարկում է հռոմեական զորավար Կորբուլոնի կողմից ավերված Արտաշատ մայրաքաղաքի վերականգնումը։ Միանգամայն հավանական կարող է համարվել, որ հենց I դարի 70-ական թթ. էլ տեղի է ունեցել Գառնիի տաճարի կառուցումը։ Հ. Մանանդյանը այն տանում է ավելի առաջ, Երվանդունիների ժամանակ, որը հավանական չէ, որովհետև Գառնիի տաճարի ճարտարապետությունը, ընդհանուրի կարծիքով, կրում է հռոմեական ճարտարապետության դրոշմ։ Թեև շինարվեստով հունական է, սակայն հատակագծային ու ծավալատարածական հորինվածքով, դրվագմամբ և սյունաշարի հոնիական ոճի օրդերով նմանակներ ունի իր կառուցման ժամանակաշրջանի հռոմեական տաճարների մեջ։

Խորենացու երկում տարբեր առիթներով հիշատակությունների ենք հանդիպում հին Հայաստանի Զարիշատ, Զարեհավան քաղաքների, Անհուշ, Արտդերս, Անի (Կամսի), Բաբերդ, Աղթամար և այլ ամրոցների մասին, սակայն քաղաքաշինական հարցերի լուսաբանման տեսակետից դրանք որոշություն չեն ընձեռում։

Անդրադառնանք ևս մեկ քաղաքի՝ Վաղարշապատին, որին վիճակվեց ճատու լինել Արարատյան դաշտի անտիկ շրջանի վերջին մայրաքաղաքը։ Այս կառուցապատվել է պատմական Վարդգեսավանի տեղում, որն իր հերթին հիմնադրել էր հայոց Երվանդ Սակավակյաց թագավորի (մ. թ. ա. 570—560 թթ.) փեսա Վարդգես Մանուկը։ Պատմահայրը այդ մասին հայտնում է. «Վաղարշը ... պարսպով պատեց նաև Վարդգեսի հղոր ավանը, որի մասին ժառանգներն ասում են.

Գաղթական գնաց Վարդգես Մանուկը
Տուհաց գավառից, Քասաղ գետի մոտ,
Եկավ ու նստավ Շրեղ բլրի մոտ,
Արտիմեդ քաղքի, Քասաղ գետի մոտ,
Երվանդ արքայի դուռը թակելու

Այնուհետև, շարունակում է Խորենացին, «Վաղարշը պատեց նրան պարսպով և պատվարով և կոչեց Վաղարշապատ, որ (կոչվում է նաև) Նոր քաղաք» (134)։

Հին Վաղարշապատի մասին մեր տեղեկությունները մասամբ լրանում են աղբյուրներից։ Ագաթանգեղոսի մոտ Հռիփսիմյաններին նվիրված պատմության մեջ կարելի է հանդիպել Վաղարշապատի որոշ նկարագրության։ Նրա Տրդատ III-ի պալատը, ուր բանտարկված էր Հռիփսիմե կույսը, գտնվում էր պարիսպներով շրջապատված միջնաբերդում։ Այստեղ բացի պալատից կային ներքին փողոցներով («փողոցս ի ներքնագոյնս») միմյանց հետ կապված այլ շենքեր։ Թագավորի և Հռիփսիմեի սպասվող ամուս-

11 Երևան, 1988։

12 К. В. Тревер. Очерки по истории культуры древней Армении. М.—Л., 1953, с. 67.

նության առթիվ հավաքված ամբոխը լցված էր մասամբ Ներքին փողոցներում, մասամբ բերդամիջում և մասամբ էլ քաղաքամիջում։

Քաղաքի պարիսպներում բացվում էին դարպասներ, որոնցից Ագաթանգեղոսը հիշատակում է երկուսը։ Արևելյանը («Արեգ դուռն քաղաքի») դուրս էր գալիս դեպի մայրուղին, որն անցնում էր «ի սարահանդակ, ի բարձրավանդակ յավազին տեղի մի» (համապատասխանում է Հռիփսիմեի տաճարի տեղադրությանը), որը տանում էր դեպի Արտաշատ։ Մյուս դարպասը բացվում էր դեպի Մեծամոր գետի վրա ձգված կամուրջը, որի կողմից քաղաքը պաշտպանված էր Մեծամորի ջրով լցվող խանդակով։ «Պարկեն փոս» կոչվող ճահճոտ տարածքը մի կողմից շրջապատում էր քաղաքը («շուրջ գայր ղքաղաքաւն»), կազմելով Վաղարշապատի պաշտպանական համակարգի բաղկացուցիչներից մեկը[13]։

II դարի երկրորդ կեսին Վաղարշապատը կարճատև գտնվել է հռոմեացիների տիրապետության տակ, որոնք, դատելով գտնված լատիներեն արձանագրությունից, այստեղ ծավալել են շինարարական որոշ գործունեություն քաղաքի պաշտպանական կառուցվածքների ամրացման ուղղությամբ։ 1931 թ. կատարված պեղումների ժամանակ Էջմիածնի մայր տաճարի այժմյան պարիսպներից ներս, արևելակողմում բացվել են անտիկ դարաշրջանի քաղնիքի մնացորդներ, իսկ Հռիփսիմեի տաճարի հիմքերում հայտնաբերվեցին անտիկ շենքերից նրա հիմքերում դրված հոնիական ոճի քիվերի քարեր։

Խորենացու մոտ սեղմ, բայց արժեքավոր տեղեկություններ կան նաև վաղ միջնադարյան Հայաստանի մի քանի քաղաքների հիմնադրման մասին։

Դրանցից մեկը վերաբերում է Խոսրով Կոտակ թագավորի օրոք (332—338 թթ.) Դվինի հիմնադրմանը, որը, ինչպես նշվեց վերը, տեղի է ունեցել Արտաշատից արքունիքը այստեղ փոխադրելու կապակցությամբ։ Այդ մասին հայտնում է Պատմահայրը. Խոսրովը «...անտառ տնկեց Ազատ գետի մոտ, որ մինչև այսօր էլ կոչվում է նրա անունով։ Նաև արքունիքը փոխադրում է անտառից վերև մի բլուրի վրա և շինում է արևից պատսպարված ապարանք. (այս տեղը) պարսկական լեզվով կոչվում է Դվին, որ նշանակում է բլուր» (էջ 179)։

Նույնի մասին, փոքր-ինչ ավելի ճշգրիտ, պատմում է Փավստոս Բուզանդը։ Նպատակադրվելով որսատեղեր ստեղծել և բարելավել նոր քաղաքատեղի բնակլիմայական պայմանները, Խոսրովը իր Վաչե զորավարին հրամայում է բազմաթիվ մշակներ հրավիրել, անտառներից վայրի կաղին հանել և արհեստական անտառ տնկել Դվինի շուրջը. «...սկսելով արքունի ամուր բերդից, որ ասում են Գառնի, մինչև Մեծամորի դաշտը, այն բլուրը, որ կոչվում է Դվին և գտնվում է Արտաշատ մեծ քաղաքի հյուսիսային կողմում»[14]։ Այսպիսով, այսօր էլ մասամբ գոյություն ունեցող Խոսրովի անտառի մասին երկու պատմիչների հայտնած տեղեկությունը միանգամայն համընկնում է։

1937 թ. պրոֆ. Սմբատ Տեր-Ավետիսյանի ղեկավարությամբ սկսված պեղումները, որոնք որոշ ընդմիջումով շարունակվում են ցայսօր, չափազանց հարուստ նյութեր ընձեռեցին մեր ժողովրդի պատմության, նյութական մշակույթի, Դվինի քաղաքաշինական կառուցվածքի, եկեղեցական և աշխարհիկ ճարտարապետական հուշարձանների մասին։ Դրանց վերաբերյալ, լույս են տեսել բազմաթիվ աշխատություններ։ Առաջիններից մեկը մերն է՝ «Դվինի V—VII դարերի ճարտարապետական հուշարձանները» դիրքը, որը լույս է տեսել 1950 թ.։ Այն ես շարադրել եմ 1939—1940 թթ.՝ լինելով հնագիտական

---

13 Ագաթանգեղայ Պատմութիւն Հայոց. Թիֆլիս, 1882, էջ 118, 126։

14 Փավստոս Բուզանդ. Հայոց պատմություն, Երևան, 1968, էջ 97։

արշավախմբի ճարտարապետը։ Արշավախմբի ետպատերազմյան շրջանի պեղումների ղեկավար, պրոֆեսոր Կարո Ղաֆադարյանի հեղինակությանն են պատկանում երկու ծավալուն հատորներով 1952 և 1982 թթ. լույս տեսած հիմնարար մենագրությունները, որոնցում հանգամանորեն ներկայացվում են պեղումների արդյունքները։ Այդ կարգի աշխատությունների շարքը այժմ լրացվում է պեղումների նոր ղեկավար, հնագետ Արամ Քալանթարյանի և այլոց աշխատություններով, որոնցով առաջացել է մի հարուստ մատենաշար։

Խորենացին պատմում է նաև Արշակավան քաղաքի հիմնադրման մասին Արշակ II (350—368 թթ.) թագավորի կողմից, որում նա բնակեցրեց ամեն տեսակ հանցագործների։ Քաղաքը կառուցապատված էր Արարատյան նահանգի Կոդովիտ գավառում, Մասիս լեռան ստորոտին։ Արշակավանին չվիճակվեց հարատևել, որովհետև նախարարները, վրդովված թագավորի ձեռնարկից, հարձակվեցին քաղաքի վրա և սրի մատնեցին նրա բոլոր բնակիչներին, բացի ծծկեր երեխաներից (էջ 195—196)։

Երբ վերանում է Արշակունյաց թագավորությունը և Հայաստան աշխարհն ընկնում է պարսկական (արևելյան մասը) և բյուզանդական (արևմտյան մասը) տիրապետությունների տակ, այդ մասերի վարչական կենտրոնի նշանակությունն են ստանում Դվին և Կարին կամ Թեոդոսուպոլիս (հետագայում՝ Արզ-ի-ռում, Էրզրում) քաղաքները։

Թեոդոսուպոլիս բերդաքաղաքը Կարնո դաշտում ֆորպոստ լինելով երկու տիրապետությունների սահմանի վրա, Բյուզանդական կայսրության համար ուներ ռազմավարական կարևոր նշանակություն, ուստի նա խիստ ամրացված էր։ Ինչպես նշում է Նիկողայոս Ադոնցը, «Կարին հայկական անունը, հին հայկական գավառի անունով, ցույց է տալիս, որ Թեոդոսուպոլիս ամրոցի տեղում հնում գոյություն է ունեցել եթե ոչ քաղաք, ապա գյուղ»[15]։

Թեոդոսուպոլսի հիմնադրման մասին պատմելով Մովսես Խորենացին առանձնահատուկ նշանակություն է տալիս քաղաքի տեղի ընտրության գործոններին։ Ըստ նրա՝ «Անատոլ զորավարն արքունական հրամանն ստանալով՝ գալիս է մեր աշխարհը և շատ կողմեր շրջելով, հավանում է Կարին գավառին՝ այնտեղ շինելու արգավանդ, շատաջուր և բարեբեր քաղաքը, համարելով, որ այդ տեղը միջին դիրք ունի, ոչ շատ հեռու այն տեղերից, որտեղից բխում են Եփրատի մի քանի աղբյուրները և հանդարտ հոսանքով առաջ գնալով ծովանում են, ճահճի տեսք ստանում։ Այստեղ անհաշիվ քանակությամբ ձկներ են լինում և զանազան տեսակ թռչուններ, որոնք սնվում էին այնտեղ, որոնց ձվերով միայն կերակրվում էին բնակիչները։ Եվ ճահճի ափին եղեգնուտներ մեծ քանակությամբ եղեգով։ Դաշտերում բուսնում են բարձր խոտեր և առատաբեր սերմատու բույսեր։ Լեռները լիքն են կճղակաբաշխ և որոճող երեներով։ Բազմությամբ աճում են այդտեղ ընտանի եղջյուրավոր անասուններ, հաղթահասակ, խոշոր, լիքը մարմնով և պարարտ։

Մի գեղեցկագիր լեռան ստորոտում,— շարունակում է Պատմահայրը՝ անդրադառնալով ամրաշինական առանձնահատկություններին,— գտավ մի տեղ, որտեղ բխում են բազմաթիվ մանր աղբյուրներ մաքուր ջրերով, և այդտեղ գծեց քաղաքի տեղը։ Նրան շրջապատեց խոր փոսով, շատ խորը դրեց պատվարի հիմքը, նրա վրա ահագին բարձր աշտարակներ շինեց, որոնցից առաջինը կոչեց Թեոդոս՝ Թեոդոսի պատվին։ Սրանից այն կողմը շինեց ժայռաձև աշտարակներ, նավերի ցուկների նման, և անցքեր՝ ներս ընկած խորշերով, որոնք դեպի լեռն են դարձած։ Այսպես շինեց նաև դեպի հյուսիսային դաշտը (նայող կողմում)։ Իսկ արևելք ու արևմուտք (դարձած կողմերում) կանգնեցրեց բոլորակաձև աշտարակներ։ Իսկ քաղաքի մեջ, մի բարձրավանդակի վրա, շինեց բազմաթիվ մթերանոցներ, որ կոչեց Ավգոստիոն, Ավգոստոսի պատվին։ Եվ շատ տեղերից անհայտ ուղիներով (այսինքն՝ ստորգետ-

[15] Մ. Адонц. Армения в эпоху Юстиниана. СПб., 1908, с. 143.

նյա—Վ. Հ.) ուրիշ ջրեր բերեց մտցրեց քաղաք։ Քաղաքը լցրեց զենքերով ու պահտպան դնդերով և կոչեց Թեոդուպոլիս, որպեսզի քաղաքի անունը հիշելով անմահ մնա (թագավորի) անունը, իսկ բխող ջերմուկները վերևից ծածկեց տաշած քարերով» (էջ 235)։

Թեոդոսուպոլսի Խորենացու տված նկարագրությունը ևս հիմնականում համապատասխանում է իրականության, ինչի մասին վկայում են քաղաքի տարածքում պահպանված միջնաբերդը և պաշտպանական կառուցվածքների համակարգի մնացորդները։

Վերջում կուզեի կանգ առնել Խորենացու ևս մեկ հիշատակության վրա. պատմելով բարբարոսների ձեռքով սուրբ Գրիգորիսի (Գրիգոր Լուսավորչի թոռան) սպանության մասին, Խորենացին հայտնում է, որ «Նրա մարմինը բերին փոքր Սյունիք, թաղեցին Ամարաս ավանում» (էջ 175)։ Ամարասի վանքում, վերակառուցված եկեղեցու ավագ խորանի տակ, հիմա էլ գտնըվում է սուրբ Գրիգորիսին վերագրվող դամբարանը։ Ի թիվս այլ կարգի շատ փաստերի, դա ևս վկայում է, որ պատմական Արցախը ի սկզբանե Հայաստանի բաղկացուցիչ մասն է կազմել՝ նրա «արևելից» կողմում։

МОВСЕС ХОРЕНАЦИ О ДРЕВНЕАРМЯНСКОМ ГРАДОСТРОИТЕЛЬСТВЕ И АРХИТЕКТУРЕ

Проф. В. М. АРУТЮНЯН

Резюме

«История Армении» Мовсеса Хоренаци затрагивает почти все основные аспекты истории армянского народа, в том числе его строительной деятельности. В ней встречаются весьма ценные сведения о градостроительно-архитектурной культуре древней Армении. Обстоятельно описывает он цитадель столицы урартского государства—Тушпу (Ванскую крепость), правда, ошибочно приписывая ее основание ассирийской царице Шамирам (Семирамиде). Описание настолько подробно, что не возникает сомнения в том, что Хоренаци лично побывал на месте, воочию видел этот уникальный памятник скального зодчества. Хотя сообщаемые им сведения об античных городах Армении—Армавире, Ервандашате, Ервандакерте, Арташате, Тигранакерте и Вагаршапате—сравнительно более кратки, они представляют определенный интерес с точки зрения понимания основных градостроительных правил той эпохи. У Хоренаци встречаются также сведения о крепостях древней Армении. Весьма кратко его повествование о крепости и языческом храме Гарин, однако и оно содержит ценные данные не только о самой крепости и храме, но и о примененной при их возведении строительной технике, о греческой надписи царя Трдата, найденной в наше время. Раннесредневековые города Армении—Аршакаван, Двин, Карин—Феодосиполь, Нпркерт—Мартирополь—сравнительно близки ко времени жизни отца армянской историографии. Поэтому его повествование о них приобретает особую ценность как вполне достоверный источник по истории градо-

строительного искусства рассматриваемой эпохи. Кстати, особую важность приобретает в наше время сообщение Мовсеса Хоренаци относительно трагической смерти епископа Григориса (внука первопрестольного патриарха армянской церкви Григория Просветителя). Труп погибшего, сообщает он, привезли и похоронили в Амарасе. И потому церковь Амарасского монастыря, под алтарем которой помещается усыпальница Григориса, по праву почитается карабахцами как одно из святых мест этого края древней Армении.